



**MILLENNIUM CHALLENGE  
ACCOUNT - ARMENIA**  
STATE NON-COMMERCIAL ORGANIZATION

Մամլո հաղորդագրություն

Սեպտեմբերի 30, 2009թ.

### **ԱՄՆ կառավարությունը 36 միլիոն դոլար է տրամադրում պոմպակայանների վերանորոգման համար**

Երևան, Հայաստան. 2009թ. սեպտեմբերի 30-ին «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ը (ՀՄՀ-Հայաստան) 17 պոմպակայանների վերականգնման պայմանագիր կնքեց Ֆարմեքս Թեքնոլոջիս, Ֆլորիան Լուպեզ և Գաբսե Ինժեներ ֆրանսիական կոնսորցիումի հետ: Պայմանագիրը կնքվեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ԳԳՏ Արա Հովսեփյանի և Ֆարմեքս-ի նախագահ Նոուրեդին Սմալիի միջև: Պայմանագրի ստորագրմանը ներկա էին ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանը, ԱՄՆ և ՀՀ կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներ: Վերոհիշյալ աշխատաքները իրականացվելու են Ոռոգման ենթակառուցվածքների բաղադրիչի ամենախոշոր պայմանագրի շրջանակներում՝ կարևոր դեր խաղալով գյուղատնտեսության ոլորտի տնտեսական աճի միջոցով Հայաստանում աղքատության կրճատման գործընթացում:

Նշված 17 պոմպակայանների վերանորոգումը Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Գեղարքունիկի, Տավուշի և Սյունիքի մարզերի թվով 100 համայնքների ավելի քան 182,000 շահառուներին կապահովի ոռոգման ջրի հուսալի մատակարարում, կնպաստի գյուղատնտեսական արտադրողականության աճին, ինչպես նաև կբարձրացնի էլեկտրաէներգիայի օգտագործման արդյունավետությունը: Ներկայումս, ավելի քան 31,000 հեկտար ոռոգվող հողատարածքներ ջրով են ապահովվում պոմպակայանների միջոցով, որոնք ոռոգման միակ աղբյուրն են հանդես գալիս տնամերձերը ոռոգելու համար:

ՀՄՀ-Հայաստան ծրագրի Ոռոգման ենթակառուցվածքների բաղադրիչի շրջանակներում կիրականացվեն նաև վեց մայր ջրանցքների վերանորոգման, չորս ինքնահոս համակարգերի կառուցման, մոտ 70 համայնքներում ներտնտեսային ցանցերի բարելավման և Արարատյան դաշտավայրի դրենաժային համակարգի բարելավման աշխատանքները:

Այս իրադարձության և ՀՄՀ-Հայաստան ծրագրի վերաբերյալ մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել

[www.mca.am](http://www.mca.am)

Հազարամյակի Մարտահրավեր Հիմնադրամ Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) Պետական Ռջ Առևտրային  
Կազմակերպություն է, որն հիմնվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից՝  
Ժողովրդավարության և արդարության սկզբունքներով իրականացնելու Հազարամյակի Մարտահրավեր  
Կորպորացիայի և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև ստորագրված  
համաձայնագիրը: